



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ԿՈՂ

050.0140 Ա. 30.09.19

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 140 Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 31-րդ հոդվածներով՝ Հայաստանի
Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական
բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
տեղակալ**

Ներսես Երիցյան

2019 թ. հոկտեմբերի 1
ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը
«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ¹

1. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի կատարման գործընթացը

Տնտեսական ակտիվության բարձր մակարդակը պահպանվում է նաև 2019 թվականի ընթացքում, և ըստ գնահատականների, տարվա արդյունքում, տնտեսական աճը կգերազանցի ՀՀ կառավարության կողմից 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի հիմքում դրված ցուցանիշը:

Տնտեսական ակտիվության աճին մեծ նպաստում են ունեցել առաջարկի գործոնները՝ մեծամասամբ ծառայությունների և արդյունաբերության ոլորտներում գրանցված արտադրողականության աճերը, որոնք իրենց մեջ կրում են տնտեսության ուրվագծվող կառուցվածքային փոփոխությունների և մրցակցության ավելացման ազդեցությունը: Համախառն պահանջարկի մասով՝ տնտեսական աճն ուղեկցվել է ներքին պահանջարկի աճով, որին, զսպող հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում, նպաստել է հատկապես ընդլայնող դրամավարկային քաղաքականությունը: Վերջինս արտահայտվել է վարկավորման բարձր աճի տեմպերի և վարկերի տոկոսադրույքների շարունակական նվազման միջոցով:

Համաշխարհային տնտեսության աճի տեմպերի դանդաղման պարագայում գրանցվել է արտահանելի ճյուղի արտադրողականության աճով պայմանավորված զուտ արտահանման որոշակի բարելավում: Ապրանքների և ծառայությունների իրական արտահանման աճի տեմպը գերազանցում է իրական ներմուծման աճի տեմպին, որի ներքո ակնկալվում է, որ տարվա արդյունքում ՀՀ ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ում նախորդ տարվա նկատմամբ կբարելավվի:

Հարկային վարչարարության բարելավման միջոցառումների դրական ազդեցությունը դրսևորվել է հարկերի հավաքագրման գերակատակարումներով, ինչը խոսում է սովետային հատվածի կրճատման մասին: Տարվա համար գնահատվում է, որ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ 1.3 տոկոսային կետով բարձր

¹ Սույն փաստաթղթում ներկայացված թվային տվյալները և գնահատականները բերված են «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծից:

կլինի²: Նման զարգացումների պարագայում հարկային եկամուտները համախառն պահանջարկի վրա կունենան զգալի զսպող ազդեցություն:

Համախառն պահանջարկի վրա զսպող ազդեցություն է դրսևորվել նաև պետական ծախսերի կատարման ոլորտում: Այսպես, տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի ծախսերի կատարումն ընթանում է ՀՀ կառավարության կողմից ծախսերի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներով, որի արդյունքում գրանցվում են մեծ ծավալի խնայողություններ՝ մեծամասամբ կապիտալ ծախսերի գծով: Արդյունքում, հաշվի առնելով պետական բյուջեի ցուցանիշների ընթացիկ զարգացումները, 2019 թվականի պետական բյուջեի սպասվող ծախսերը վերանայվել են նվազման ուղղությամբ: Ակնկալվում է, որ տարվա արդյունքում ծախսեր/ՀՆԱ ցուցանիշի աճը ծրագրվածից բավականին ցածր կլինի:

Տարվա յոթ ամիսներին ձևավորվել է հավելուրդային պետական բյուջե, որը կազմել է 107.3 մլրդ դրամ, նախորդ տարվա 18.1 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Նշված զարգացումների ներքո գնահատվում է, որ 2019 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը էապես կնվազի՝ կազմելով ՀՆԱ-ի 0.6%-ը՝ 1.2 տոկոսային կետով ցածր գտնվելով 2018 թվականի բյուջեի պակասուրդի փաստացի մակարդակից³: Այսպիսով, 2019 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կունենա զգալի զսպող ազդեցություն⁴: Արդյունքում, ակնկալվում է, որ ՀՀ կառավարության պարտքը ՀՆԱ-ում նախորդ տարվա նկատմամբ 1.3 տոկոսային կետով կնվազի՝ տարեվերջին կազմելով 50.3%:

Նկատի ունենալով 2019 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման ընթացքը և ելնելով գների կայունության ապահովման միջինժամկետ նպատակից, ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է վարել ընդլայնող դրամավարկային քաղաքականություն՝ տարվա ընթացքում ավելացնելով ընդլայնման չափը և նվազեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Ի լրումն դրա, հաշվի առնելով նաև ընթացիկ հաշվի բարելավման միտումները, Կենտրոնական բանկը մեծ չափով լրացուցիչ իրացվելիություն է ներարկել ֆինանսական համակարգ՝ գնելով մեծ քանակությամբ ավելցուկային արտարժույթային միջոցներ և փոփոխելով պարտադիր պահուստավորման մի մասը ՀՀ դրամից արտարժույթի, որի ընդհանուր ծավալը տարվա ընթացքում գնահատվում է ավելի քան 300 մլրդ դրամ:

² Հարկերի մեջ ներառված չէ ԱԱՀ-ի գծով մինչև 2017 թվականի հուլիսը կուտակված դեբետային մնացորդներից 56 մլրդ դրամ տնտեսվարողներին հետ վերադարձի վերաբերյալ ս/թ սեպտեմբերի 23-ին ՀՀ ազգային ժողովի ընդունած օրենքի ազդեցությունը:

³ ԱԱՀ-ի գծով 56 մլրդ դրամ հետ վերադարձը հաշվի առնելու դեպքում բյուջեի պակասուրդը կկազմի ՀՆԱ-ի 1.5 տոկոսը:

⁴ ԱԱՀ-ի գծով 56 մլրդ դրամ հետ վերադարձը հաշվի առնելու դեպքում հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա որոշակիորեն կթուլանա:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը
«Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ կառավարության 2020 թվականի մակրոտնտեսական կանխատեսումները բավականին մոտ են ՀՀ ԿԲ կանխատեսումներին, ըստ որոնց շարունակվելու են տնտեսության կառուցվածքային վերափոխումները՝ դեպի ավելի արտադրողական ճյուղեր, ինչպիսիք են ծառայությունները և արդյունաբերությունը: Այսպիսով, հիմնականում վերոնշյալ երկու ճյուղերի համեմատաբար բարձր աճով պայմանավորված 2020 թվականի համար նախատեսվել է ՀՆԱ իրական աճի 4.9% մակարդակ:

2020 թվականին ամբողջական պահանջարկի աճը պայմանավորված կլինի թե՛ ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի աճերով, և թե՛ արտաքին զուտ պահանջարկի բարելավմամբ: Ընդ որում, սպառման իրական աճի ձևավորմանը նպաստելու է բացառապես մասնավոր սպառման աճը: Ներդրումների իրական աճը պայմանավորված կլինի և՛ պետական ներդրումների աճով, և՛ մասնավոր հատվածի ներդրումային ակտիվության բարելավմամբ: Միևնույն ժամանակ արտահանելի ճյուղերի արտադրողականության շարունակվող աճի պայմաններում, արտահանման իրական աճը կշարունակի գերազանցել ներմուծման իրական աճին և արդյունքում, ընթացիկ հաշվի բարելավման միտումը կպահպանվի նաև 2020 թվականին:

Կիրառվող հարկաբյուջետային կանոնին համահունչ՝ որպես հարկաբյուջետային քաղաքականության 2020 թվականի հիմնական ուղենիշ նախանշվել է ընթացիկ ծախսերի աճի սահմանափակումը և պետական բյուջեի պակասուրդը միայն կապիտալ ծախսերի հաշվին ձևավորելու սկզբունքը: Այս պայմաններում, տարվա համար նախատեսված բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ում կկազմի 2.6 տոկոս, որի ներքո հարկաբյուջետային հատվածի ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա 2020 թվականին կլինի 2.6 տոկոս ընդլայնող⁵:

2020 թվականի պետական բյուջեի եկամուտների մասով շարունակվելու է ստվերի կրճատման և հարկային վարչարարության բարելավման միջոցով հարկերի հավաքագրման բարձր տեմպերի ապահովումը: Ըստ այդմ, ակնկալվում է հարկեր/ՀՆԱ ցուցանիշի 2019 թվականին սպասվող ցուցանիշի համեմատ 0.3 տոկոսային կետ աճ⁶, որի պարագայում հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2020 թվականին կկազմի 22.6 տոկոս: Ինչ վերաբերում է պետական բյուջեի ծախսերին, ապա 2020 թվականին իրականացվող ընդլայնող քաղաքականության արդյունքում ձևավորվող ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2.0 տոկոսային կետով բարձր է 2019 թվականին սպասվող ցուցանիշի համեմատ, որն ամբողջությամբ պայմանավորված է կապիտալ ծախսերի գծով զգալի աճի նախատեսմամբ: Այսպես, 2020 թվականին կապիտալ ծախսերը ՀՆԱ-ում կգերազանցեն

⁵ ԱԱՀ-ի գծով վերը նշված 56 մլրդ դրամ հետ վերադարձի ազդեցությունը հաշվի առնելու դեպքում ընդլայնման չափը ավելի փոքր կլինի:

⁶ Հաշվարկի մեջ ներառված չէ ԱԱՀ-ի գծով մինչև 2017 թվականի հուլիսը կուտակված դեբետային մնացորդներից 56 մլրդ դրամ տնտեսվարողներին հետ վերադարձի վերաբերյալ ս/թ սեպտեմբերի 23-ին ՀՀ ազգային ժողովի ընդունած օրենքի ազդեցությունը:

2019 թվականին սպասվող ցուցանիշը 2.2 տոկոսային կետով՝ կազմելով ՀՆԱ 5.0 տոկոսը: Սակայն կարևոր է, որ 2020 թվականին կապիտալ ծախսերը իրականացվեն ամբողջական ծավալով և արդյունավետորեն, քանի որ դրանք շատ նշանակալի դեր ունեն երկրի տնտեսական ներուժի ավելացման գործում:

Թեև 2020 թվականին պետական պարտքը ՀՆԱ-ում շարունակել է նվազել (ՀՀ կառավարության պարտքը նվազել է 1.5 տոկոսային կետով կազմելով ՀՆԱ 48.8 տոկոս), սակայն հարկ է նշել, որ պարտքի կառուցվածքում դեռևս բարձր է մնում արտաքին պարտքի կշիռը: Այս պարագայում, կարևորվում է պարտքի կառուցվածքի բարելավումը՝ մասնավորապես արտաքին պարտքի ներքին պարտքով փոխարինումը, ինչպես նաև կապիտալի շուկայի զարգացմանն ուղղված ներքին պարտքի կառավարման մեխանիզմների ներդրումը՝ ներքին պարտքի գործիքակազմի ընդլայնումը և միջազգային ինստիտուցիոնալ մասնակիցների աճը:

Հարկ է նշել, որ 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի ծրագրում հաշվի են առնվել նաև հնարավոր ռիսկերն ու անորոշությունները, գնահատվել են դրանց ի հայտ գալու պարագայում բյուջեի ծրագրի հիմքում ընկած հիմնական ենթադրություններից և ՀՆԱ կանխատեսումներից հնարավոր շեղումների ազդեցությունը բյուջեի հոսքերի վրա:

Այսպիսով, գնահատվում է, որ 2020 թվականի ՀՀ պետական բյուջեն շարունակում է նպաստել երկրում պարտքի և մակրոտնտեսական կայունության ձևավորմանը, իսկ համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատվում է ընդլայնող: Կառուցվածքային տեսակետից հարկերի հավաքագրման արդյունավետության շարունակական բարձրացումը թույլ կտա ապահովել հավասար մրցակցային դաշտ և բարենպաստ պայմաններ կստեղծի մասնավոր ներդրումների իրականացման համար: Մյուս կողմից պետական ներդրումների ապահովումը կարևոր նշանակություն ունի ենթակառուցվածքների պահանջը լրացնելու և ՀՆԱ երկարաժամկետ ներուժային աճը ավելացնելու տեսակետից: